«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը պատմություն առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Անանյան

Ուսումնական հաստատություն՝ << ՀՀ Լոռու մարզի Քարկոփի միջն. դպրոց>> ՊՈԱԿ

Երևան -2022

Բովանդակություն

1.Ներածություն:

2.Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան:

3. Ինչ է պրոբլեմային ուսուցումը:

4.Պրոբլեմային ուսուցման դասի պլան:

5. Եզրակացություն:

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը պատմություն առարկայի դասավանդման գործընթացում

Հիմնահարց- Պրոբլեմային ուսուցումը արդյոք՞ զարգացնում է աշակերտի տրամաբանական և քննադատական մտածողությունը

Ներածություն:

Ուսումնական գործընթացի զարգացման,կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների մշակման,որոնց շարքում է նաև պրոբլեմային ուսուցումը,այսինքն ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպումը,որը սովորողին ստեղծված իրավիճակը գիտակցելու,առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու,չիմացածն ու անհայտը որոնելու,խնդիրը լուծելու և վերջնական նպատակին հասնելու հնարավորություն է ընձեռում:Նշված տեխնոլոգիայի էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է,որը նպաստում է աշակերտների մտածողության մակարդակի բարձրացմանը:

Մերօրյա տեղեկատվական դարաշրջանում սովորողները ամրապնդման ենթակա նյութի ծավալների աճին զուգահեռ հաճախ ոչ թե ամրապնդում,այլ պարզապես մտապահում են յուրացման համար նախատեսված նյութերը,այն էլ շատ կարճ ժամանակով և միայն դասահարցմանը կամ քննությանը պատրաստ լինելու համար: Դասընթացում թեմային հատկացված ժաանակահատվածի սահմանափակությունը,աշակերտների թիվը հնարավորություն չեն տալիս ուսուցչին պարզելու, արդյոք՞ թեման յուրացվել է յուրաքանչյուր սովորողի կողմից: Հարցման ենթարկված աշակերտը իրականում ամրապնդել է թեման,թե՞ պարզապես կարողանում է վերարտադրել մտապահածը:Բացի դրանից դասարանային պայմաններում նույն թեման միևնույն ժամանակահատվածում և միևնույն մեթոդներով ընդհանուր կամ միևնույն ուսումնական ծրագրերով ուսումնական խմբի յուրաքանչյուր սովորողի կողմից չի կարող յուրացվել նույն աստիճանով,քանի որ տարբեր աշակերտներ ունեն տարբեր ընդունակություններ:Ուստի ուսուցիչները հաջորդ նյութին անցնելուց առաջ բավարարվում են սովորողների կողմից տվյալ թեմայի յուրացման աստիճանի գնահատմամբ:Նմանօրինակ խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ են առաջարկում ուսուցման նորարարական բազմաթիվ տեխնոլոգիաներ,որոնցից մեկն էլ պրոբլեմային ուսուցումն է:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան մշակել է Ջ.Դյուին:<<Ինչպես ենք մենք մտածում>>աշխատության մեջ ամերիկացի փիլիսոփա,հոգեբան ուսուցիչը մերժում է ավանդական դոգմատիկ ուսմունքը դրան հակադրելով խնդիրների լուծման գործում ուսանողների ակտիվ և անկախ պրակտիկ գործունեությունը:<<Մտածմունքն սկսվում է այնտեղ,որտեղ առկա է խնրահարույց իրավիճակ,և դա խնդիրների լուծումն է>>,ասում է Դյուին:Նրա այս բանաձևը 20-րդ դարում ձևավորեց պրոբլեմային ուսուցման հիմքը:Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման մեջ էական դեր է խաղացել ամերիկացի հոգեբան Բրունների

հայեցակարգը,որը հիմնված է ուսուցման նյութի կառուցվածքի և նոր գիտելիքների յուրացման գործընթացում ինտուիտիվ մտածողության գերիշխող դերի վրա:Ճանաչելով տրամանաբանական մտածողության զարգացումը որպես ուսուցման նպատակ Դյուին,Բրունները,Բարթոնը նծում են ուսուցման մեջ խնդրահարույց մոտեցման կարևորությունը:Ինչպես ուսուցման մյուս տեխնոլոգիաները,պրոբլեմային ոսւուցումը ևս նպատակաուղղված է կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը,որն իրականացվում է ուսումնական հաստատություններում ուսուցման գործընթացի կազմակերպման նորարարական միջոցների օգնությամբ:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան հիմնվում է հետևյալ գաղափարի վրա.պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողին կանգնեցնում է կանխատեսված դժվարությունների առաջ,որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում և ստիպում է սովորողին մտածել,որոնել,քննարկել,ինչն էլ նպաստում է նրա իմացական հետքրքրությունների զարգացմանը:Ուսանողը պետք է ինքնուրույն որոնի խնդրի լուծումը,իսկ դասախոսը պարտավոր է նրա ուսուցման գործընթացը մոտիվացնելով,կազմակերպելով,համակարգելով,ուղղորդելով և վերահսկելով:Պրոբլեմային ոսուցումը հնարավորություն է տալիս,որ սովորողի մոտ ձևավորվեն ինքնակրթության հմտություն,նպատակադրման կարողություն,ձևավորվեն և զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ,ինչպիսիք են՝ինքնագնահատումը,ինքնավերահսկումը,փոխադարձ վերահսկումը:Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ապահովում է նաև ուսուցման անահատականացում՝ըստ ուսուցման բովանդակության,յուրացման արագության,ինքնուրույնության մակարդակի,վերահսկման եղանակների:Հայերենի քերականության առանձնահատկությունների ուսուցումը ժամակակակից տեխնոլոգիաներով ու մեթոդներով կարող է ուղենշային լինել սովորողների հայերենի քերականական համակարգի յուրահատկությունների ընկալման առումով:

Կ.Սելևկոն իր <<Ուսուցման տեխնոլոգիաների հանրագիտարան>>աշխատության մեջ անդրադարձել է պրոբլեմային ոսուցման առանձնահատկություններին այն դիտարկելով որպես ուսուցման ակտիվ տեխնոլոգիա:Հեղինակը մանրամասնորեն վերլուծում է տարբեր մանկավարժների տեսակետները պրոբլեմային ուսուցման վերաբերյալ:Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման գործում մեծ ներդրում ենունեցել Մախմուտովը,Մատյուշկինը,Բրուշլինսկին,Կուդրյավցևը,Լերները,Իլնիցկայան,Ռուբինշտեյնը,Վիգոդսկին,Լեոնտևը:<<Պրոբլեմային ուսուցում.անցյալը,ներկան,ապագան>>կոլեկտիվ մենագրությունում մանրամասնորեն պատմվում է ուսուցման նշված տեխնոլոգիայի զարգացման ողջ ընթացքը:

Յու. Ամիրջանյանը ընդգծել է տարբեր առարկաների ուսուցման ժամանակ խնդրահարույց իրավիճակների ստեղծման մեթոդների և խնդրի ճանաչողական առաջադրանքների բարդության գնահատման չաձանիշների կարևորությունը:

Մ.Դավթյանի և այլ հեղինակների <,Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ>>աշխատությունում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան դիտարկվում է որպես ուսուցման արդիական մոտեցում:Այսօր անհրաժեշտ է սովորողին ցույց տալ նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում,որպեսզի նա հասկանա,թե ինչ իմաստ ու նշանակություն ունի նշված առարկայի շրջանկաներում ստացած գիտելիքը հասրակական կյանքում:

Ուսուցչի կարևորագույն խնդիրներից մեկը սովորողների ինքնուրույնության,ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացմանը աջակցելն ու նպաստելն է:Սույն հոդվածով փորձել են ներկայացնել, թե ինչպես կարելի է խնդրահարույց ուսուցման միջոցով պատմության դասեն անցկացնել առավել հետաքրքիր,ակտիվ և նպատակային:Խնդրահարույց է կոչվում այն ոսուցումը,որի ընթացքում աշակերտներն ուսուցչի ղեկավարությամբ,իրենց գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ,հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ,որոնում գործողության նոր եղանակներ,կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը,գործադրում պրոբլեմային շարադրանքի,մասնակի որոնողական կամ էվրիստիկական,հետազոտական մեթոդներ,ինքուրույնաբար ձևակերպում իրենց մտահանգումներն ու եզրահանգումները,հասնում վերջնական նպատակի:Պրոբլեմային ուսուցման դասավանդման շրջանակներում ուսուցչի դերն աշակերտների առջև իրական խնդիրներ առաջադրելն է,այսինքն ուսուցիչը պատրաստի գիտելիքներ հաղորդելու փոխարեն որոշակի մեթոդների միջոցով ուղղորդում է այդ գործընթացը նախապես ճիշտ ձևակերպելով պրոբլեմային իրավիճակները:Պրոբլեմային ուսուցման մեթոդով առաջնորդվող ուսուցիչները գործուն մասնկացություն կարող են ունենալ աշակերտների կողմից պրոբլեմային առաջադրանք ընտրելու հարցում:Այս առումով պրոբլեմային առաջադրանքն առնվազն պետք է բավարարի հետևյալ չափանիշները.

ա.Պետք է իրական լինի:Սա նշանակում է,որ խնդիրը պետք է խարսխված լինի ոչ թե կոնկրետ առարկայի ուսումնական նպատակներին, այլ աշակերտի իրական ուսումնական կարգավիճակին ու ձեռքբերումներին:

բ.պետք է որոշ չափով ոչ հստակ ձևակերպում ունենա ,որպեսզի իր խորհրդավորությամբ ու խճճվածությամբ գրավի աշակերտին:

գ.Լինի իմաստալից և համապատասխանի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին:

դ.Պետք է բավարար չափով ընգրկուն լինի,որպեսզի ուսուցիչը հնարավորություն ունենա իրագործել իր ուսուցողական նպատակը:

ե.Ցանկալի է,որ առաջադրանքի լուծումը համագործակցային աշխատանք ներառի:

<<Այս ամենի արդյունքը լինում է այն,գրում է հոգեբան Կրուտեցկին,որ աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեն ինքնուրույնաբար տեսնելու,պրոբլեմային իրավիճակն ինքնուրույնաբար վերլուծելու և ինքնուրույնաբար ճիշտ պատասխան տալու ընդունակություն>>:

Ինչ է պրոբլեմայի ուսուցումը

Պրոբլեմային ուսուցում իրականացնելու համար ուսուցիչը պարտավոր է ստեղծել պրոբլեմային իրավիճակներ և աշակերտների միջոցով տալ դրանց հանգուցալուծումը:Պրոբլեմային ուսուցման էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է,երբ սովորողի կողմից յուրացված,և իր համար իրական համարվող գիտելիքների և նոր ձեռքբերվածների միջև հակասություն,բախումներ են առաջանում,երբ դրանցից յուրաքանչյուրը մյուսի իսկությունը կասկածի տակ է դնում,մերժում դրա ճշմարիտ լինելը և այլն:Ամիրջանյանը նշում է,որ պրոբլեմային իրավիճակը մտածողության սկզբնական պահն է,երբ ճանաչողական անհրաժեշտության համար ստեղծվում են ներքին պայմաններ:Պոբլեմային իրավիճակները հիմնված են հակասությունների բնույթի վրա,որոնք առաջանում են սովորողների գործնական աշխատանքերի կատարման ժամանակ:Դրանցից են,օրինակ աշակերտների բխումը պատմական այնպիսի երևույթների և փաստերի հետ,որոնք պահանջում են տեսական բացատրություններ,գործնական առաջադրանքների կատարման ժամանակ առաջացած ուսումնական իրավիճակներ և այլն:Իհարկե,ամեն մի առաջադրանք չէ,որի պատասխանը աշակերտը չգիտի և ստեղծվում է իրական պրոբլեմային իրավիճակ:Կան պրոբլեմային հարցեր,որոնք աշակերտներից պահանջում են հարդվող տեղեկության մեկնաբանում,հարցերի մեկ այլ խումբ՝ուսումնական նյութի վերլուծության կամ գաղափարների համադրում,պատկերները վերատադրելու կամ այլ կերպ արտահայտելու պահանջ են առաջադրում:Ուղղակի պետք է հիշել,որ բոլոր տիպի հարցերն էլ կարևոր են,քանի որ պայմանավորում են բազմազան և տարաբնույթ մտածողության խթանում:Սակայն երբ հարցումն ու մտածողությունը մնում են փաստային մակարդակի վրա,սովորողից պահանջվում է միայն պարզ վերհիշում,նյութի բովանդակության մննատված ընկալում և կարճաժամկետ գիտելիք:Ցավոք,այդպիսի հարցեր շատ կան դասագրքերում և ջանասեր աշակերտների կարծիքով

դրանք ամենադժվարն ու վտանգավորն են:Հարցերն իրենց բնույթով տարատեսակ են:Այսպես,օրինակ,<<Երբ է տեղի ունեցել Ջիրավի ճակատամարտը>>,<<Ով է Ալեքսանդր Մակեդոնացին>>,<<Մշակույթի որ բնագավառն է ներկայացնում Հովհաննես Դրսաղանատերտցին>>,<<Երբ է Անին դարձել Բագրատունիների մայրաքաղաք>> և նմանատիպ այլ հարցեր դիդակտիկայի տեանկյունից պրոբլեմային չեն,քանի որ դրանց պատասղաններն աշակերտը կարող է ստանալ և դասագրքից և տեղեկագրքից և հանրագիտարանից առանց մտածողական գործոնեության որևէ մասնակցության:Պրոբլեմային չէ նաև այն առաջադրանքը,որն աշակերտի համար դժվարություն չի ներկայացնում, ուղղակի յուրացնել հանձնարարությունը,օրինակ բացատրել <<դաստակերտ>>,<<տասանորդ>>,<< փերեզակ>> և այլ հասկացությունների իմաստը:Բանն այն է,որ սովորողների մտավոր ակտիվության սկզնաղբյուրը նրանց ունեցած փորձի և պրոբլեմի հակասությունների մեջ է,որոնք առաջանում են ճանաչողական առաջադրանքերի լուծման ժամանակ:Այդ հակասությունն առաջացնում է մտածական գործունեության ակտիվություն,որի արդյունքը ներկայացված պրոբլեմի հանգուցալուծումն է:Ահա ինչու սովորողներին այսպիսի պրոբլեմային իրավիճակների մեջ դնող ուսուցիչը կառուցում է այնպիսի հարց կամ առաջադրանք,որի պատասխանը գտնելու ճանապարհին աշակերտներիը հասկանում են,որ իրենց ունեցած գիտելիքները բավարար չեն պրոբլմային իրավիճակները ըմբռնելու համար:Եվ նրանք սկսում են մտածել վերլուծել և գիտակցել դժվարությունը:Այդ պահից պրոբլեմային իրավիճակը վերածվում է պրոբլեմի:Ելելով ասվածից,պետք է ենթադրել,որ ուսուցչի կողմից պրոբլեմի առաջադրումը և լուծումը ենթադրում են հետևյալ հաջորդական փուլերը.

հարցադրում

պրոբլեմային իրավիճակ

պրոբլեմ

պրոբլեմի լուծման որոնումներ

պրոբլեմի լուծում

Երբ խոսում ենք պրոբլեմային հարցադրման մասին,նկատի ունենք այնպիսի հարց,որն առաջացնում է ճանաչողական դժվարություն,երբ հարցի պատասխանը պարունակում է նոր գիտելիքներ կամ որոնելի անհայտ:Այլ կերպ պրոբլեմային է այն հարցը,որի պատասխանը սովորողի գիտելիքներում չկա,ոչ էլ այն անմիջաբար հաղորդվող տեղեկտվություն է:Օրինակ՝<<1945թ.մարտին ԽՍՀՄը,նկատի առնելով Թուրքիայի <<չեզոքության>>քաղաքականությունը և նոր իրադրությունը,չեղյալ հայտարարեց

1925թ.դեկտեմբերի խորհրդաթուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիրը>>:Ինչու ԽՍՀՄը հրաժարվեց Թուրքիայի նկատմամբ կոշտ քաղաքականությունից:<<Հասկանալի է,որ պրոբլեմի լուծման գործընթացը կախված է հարցի բնույթից,ինչը որոշվում է նրա դժվարության աստիճանով:Այդ պատճառով հարցն անհրաժեշտ է մասնատել և միայն այդ մասերի լուծումները գտնելով հնարավոր է հանգուցալուծել գլխավոր խնդիրը>>:Այսպես <<Ինչ է առաջարկում արտգործժողկոմ Մոլոտովը Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Իդենին>>,<<Ինչ պատասխանեց Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Իդենը արտգործժողկոմ Մոլոտովին>>,<<ինչ տեղի ունեցավ 1953թ.մայիսի 30-ին ԽՍՀՄի և Թուրքիայի միջև>>:Պարզ է,որ այս հարցերի պատասխանները լույս են սփռում գլխավոր հարցի բացատրման,կամ որ նույնն է հնարավորություն են տալիս լուծել պրոբեմային առաջադրանքը:

Ի վերջո,հարցադրումը մտածողության ձև է,որը սովորաբար բովանդակում է որևէ իմացական խնդիր և ուղղված է դրա լուծմանը:Այսպես,օրինակ,<<այլակերպ արտահայտման>>հարցերը սովորողից պահանջում են ստացված ինֆորմացիան ներկայացնելկամ արտահայտել այլ կերպ,օրինակ՝<<դասակարգել>>,<համադրել>>,<<վերլուծել>>,<<կանխատեսել>>,<<ստեղծել>>և այլն:Նմանատիպ պրոբլեմներ ձևակերպելիս ուսուցիչն աշակերտներին առաջարկում է վերլուծել օրինակ Վարդան մամիկոնյանի և Վասակ Սյունու կերպարները, կամ կանխատեսել, թե ինչ կլիներ, եթե նրանց միջև քաղաքական հակասություններ չառաջանային,կամ Վասակ Սյունին չհեռանար միաբանության ուխտից:Ուսումնական և մտածական այլ որակներ են զարգացնում համադրության հարցերը:Սրանց հիմնական առանձնահատկությունն այն է,որ հնարավորություն են տալիս,օգտվելով գիտելիքների և բազմազանությունից,պրոբլեմը լուծել ստեղծագործաբար:Համադրության հարցերի միջոցով աշակերտները հնարավորություն են ունենում ստեղծելու այլընտրանքային կերպարներ,օրինակ <<ինչ ես կարծում, ինչ կարող էր անել Վասակ Սյունին դավաճանական խարանը ճակատից մաքրելու համար>>,<<կարող էր Սամվելն այլ կերպ օգտակար լինել հայրենիքին>>:Համադրման հարցերի միջոցով աշակերտները վերակառուցում են գաղափարները,ստանում դրանց եզակի կամ յուրօրինակ ձևեր:

Պրոբլեմային ուսուցման մեթոդի կիրառման ժամանակ համադրական մտածողությունն առավել արդյունավետ է դրսևորվում,երբ աշակերտները հետաքրքրված են պրոբլեմով:Այս ռազմավարությունը ենթադրում է փաստերի վերլուծություն,տրամաբանական հարցադրումներ,քննադատական մոտեցում:Այս ռազմավարությունն օգնում է աշակերտներին հետազոտել պրոբլեմային առաջադրանքը,համեմատել և հակադրել պատմական փաստերը,առաջարկել լուծումներ և պրոբլեմի լուծման ուղղությամբ որոշակի գործողություններ կիրառել:

Պրոբլեմային հարցերը մտածողության բարձր մակարդակ ենթադրող հարցեր են ուղղված սովորողի խոհական մտածողության զարգացմանը:Ուստի դրանք ուսուցչի կողմից պետք է կառուցվեն զգուշորեն և խելամտորեն:Շատերի կարծիքով ընկալումը հենց մեկնաբանությունն է:Այդ իսկ պատճառով նման տիպի հարցերը ենթադրում են մեկնաբանություններ և կոչվում են մեկնաբանման հարցեր:<<Մեկնաբանման>> հարցերին բնորոշ է այն,որ դրանք օգնում են սովորողին ավելի խորությամբ մտածել տեքստի մասին,ավելի լավ պատկերացնել և յուրացնել այն:Առաջադրվող<<ինչ արավ հերոսը>>,<<ինչու այդպես վարվեց>>,և նմանատիպ այլ հարցեր սովորողին ստիպում են որոնել,գտնել պատասխանի տրամաբանական և համոզիչ հիմնավորում իրենց տեքստի մեջ,այսինքն հարցին պատասխանելով սովորողը ինքնաբերաբար յուրացնում է նաև տեքստի բովանդակությունը:Օրինակ՝<<Ձեր կարծիքով հայկական ազգային օջախի կազմակերպումը կարելի է նույնացել հայկական հարցի լուծման հետ:Մեկնաբանեք,հիմնավորեք ձեր տեսակետը>>:

Պրոբլեմային ուսուցումն աշակերտներին օգնում է դառնալ անկախ և ինքնուրույն սովորողներ,զարգացնում է տրամաբանական,դիալեկտիկական մտածողություն,ուսումնական նյութը դառնում է ապացուցելի և այլևս ոչ մի կասկած չի հարուցում:Ուսուցման գործընթացը դառնում է հուզական,ընձեռում է միջառարկայական,միջգիտական կապերից օգտվելու հնարավորություն,ձեռք բերված գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են:Ակտիվանում է ուսուցումը,արագանում է տեմպը,ինչպես նաև մեծանում է աշակերտների ինանքգործունեության շրջանակը,լայնանում է սովորողների որոնողական հետազոտական աշխատանքներ կատարե;ու ոլորտը:

Երբ աշակերտին առաջադրվում է պրոբլեմային խնդիր,նա առաջին հերթին մտածում է գտնել գործողության նոր եղանակներ,կենտրոնացնում-համախմբում է իր գիտելիքներն ու կարողությունները,դատում է,տրամաբանում,առաջադրում վարկածներ և այլն:Պրոբլեմային ուսուցումը ներառում է բազմազան զարգացնող գործառույթներ,այսպես օրինակ,հմակարգում է աշակերտների մտածողությունը,բարձրացնում նրանց սովորելու նպատակայնությունը,աճում է ուսման նկատմամբ հետաքրքրասիրությունը:Կազմակերպվում են սովորողների խմբային մտավոր աշխատանքներ,ապահովվում է նրանց մտածողության դիալեկտիկական զարգացումը,տեղի է ունենում գիտելիքների փոխանցում՝նոր իրավիճակներում:

Պրոբլեմային ուսուցման դասի պլան պատմություն առարկայից

Ուսուցման ժամանակակից մեթոդները նոր պահանջներ են առաջադրում պատմության ուսուցման գործընթացում:Մի կողմից ուսուցման գործընթացում հաշվի են առնվում տեսական նյութը սովորողներին դյուրընկալ դարձնելու,համապարփակ ուսուցանելու,համապատասխան մեթոդ ընտրելու,մյուս կողմից սովորողների բանաձևերը ճշգրտորեն կազմելու,սխալ բանաձևեր չկիրառելու բառագործածության սխալներից զերծ մնալու գործոնները:Պրոբլեմային ուսուցման միջոցով հնարավոր է ոչ միայն արդյունավետորեն իրականացնել տեսական նյութի ուսուցումը,այլև սովորողի մոտ ստեղծել ինքնազարգացման հմտություններ:Այդ ամբողջ գործընթացը հիմնված է առաջնային գիտելիքների,կարողությունների և հմտությունների ձավորման ու զարգացման և երկրորդային երկարաժամկետ անհատական կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման և երկրորդային երկարաժամկետ անհատական կարողությունների զարգացման արդյունքների գիտակցված ընտրության վրա:Հետևաբար պրոբլեմային տեխնոլոգիայով իրականացվող դասերի արդյունավետությունը շատ ավելի բարձր կլինի,եթե սովորողը կարողանա ինքնուրույն տիրապետել գիտելքիներին և մանկավարժը լոկ ղեկավարի այդ գործընթացը վերահկմամբ:ներկայումս լայնորեն կիրառվող առցանց և խառը կամ հիբրիդային եղանակով ուսուցման դեպքում ևս պրոբլեմային ուսուցումը նյութի բազմաշերտ ընկալման հրաշալի հնարավորություններ է ընձեռում: Պրոբլեմային տեխնոլոգիայով դասերի կազմակերպումը և անցկացումը ուսուցչից պահանջում է այդ ուսուցման հետ կապված մի շարք մանկավարժական հասկացությունների և տերմինների իմացություն:Դրանք են՝

1.Պրոբլեմ-տեսական և գործնական խնդիր,որը պահանջում է լուծում:Պրոբլեմը գիտելիք է չգիտելիքի մասին,ինչպես նաև այն ուղիների մասին,որոնց միջոցով չգիտելիքը վերածվում է գիտելիքի:

2.Ուսումնական պրոբլեմ-գործնական կամ տեսական խնդիր,որն ունի անհայտից բխող որոշակի հասկացությունները,որոնց հաղթահարումը նոր գիտելիքների,գործողության նոր եղանակների պահանջ է դնում:

3.Պրոբլեմային շարադրանք-ուսուցչի կողմից հաղորդվող այն շարադրանքն է,որը պարունակում է ճանաչողական դժվարություն,ճանաչողական հարց կամ խնդիր,որոնք առաջ են բերում իրավիճակներ,որոնց հաղթահարման համար սովորողները կատարում են որոնողական,հետազոտական աշխատանքներ,ի հայտ բերում նյութի մեջ ողած հակասությունները:Ինչպես ասվեց,պրոբլեմային շարադրանքը լրիվ չափով տրվում է ուսուցչի կողմից:Շարադրման ընթացքում բացահայտվում են և լուծվում հակասությունները,արվում են դատողություններ,կառուցվում են վարկածներ,մերժվում են անհավանական պատասխանները,և ի վերջո հանգում ճշմարտության:

Սովորողներին պրոբլեմը լուծելու գործողություններին վարժեցնելու նպատակով ուսուցիչն ինքն ստեղծում է պրոբլեմային իրավիճակ,ինքն է որոնում դրանց հաղթահարման ուղիները,և հասնում վերջնական նպատակին,մինչդեռ սովորողները մտովի մասնակցում են այդ գործընթացին:

4.Պրոբլեմային հարց-հարց,որն առաջացնում է ճանաչողական կամ ինտելեկտուալ դժվարություն և հակասություն:Այդպիի հարցի պատասխանը չկա սովորողների գիտելիքներում և ոչ էլ առկա է տեղեկատվության մեջ:Եթե պրոբլեմային հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելքիներ,ուրեմն այդ հարցը պրոբլեմային չէ:

5.Ճանաչողական կամ պրոբլեմային խնդիր-սա այն խնդիրն է,որի լուծման համար սովորողները որոնում են նոր գիտելիքներ ,գործողությունների նոր եղանակներ:

6.Պրոբլեմային իրավիճակ-այն դժվարագույն կացությունն է,որն առաջանում է սովորողների հոգեվիճակում ծագած խնդրի,հարցի,փաստի և անհայտի հայտնաբերման եղանակների ու մեթոդների միջև հակասությունների հիման վրա:

1.Դասի թեման

ա.Հին դասանյութ-,<<Ցարիզմի ազգային գաղութային քաղաքականության նոր դրսևորումը>>

բ.Նոր դասանյութ-<<Հակահամիդյան շարժումը:Հայկական հարցը 1912-14թթ>>

2.Դասի նպատակը - երիտթուրքերի հեղաշրջման,նրանց որդեգրած պանթուքիզմի գաղափարախոսության,կիլիկիահայության կոտորածների և ինքնապաշտպանական կռիվների մասին գիտելիքների յուրացումը:

Ա.Խնդիրներ

-կրթական՝ իմանա երիտթուրքական շարժման և պետական հեղաշրջման հետ կապած տարեթվերը,իրադարձությունները,երևութները,գործիչների անունները

Կարողանա բացահայտել երիտթուրքական շարժման պատճառները և հետևանքները

Համեմատել և համադրել երիտթուրքերի և սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի վարած քաղաքականության նմանությունները և տարբերությունները

Ընդհանրացնել մեծ տերությունների վերաբերմունքը Հայկական հարցի լուծման նկատմամբ

Դաստիարակչական՝ ցույց տալ կիլիկիահայության ինքնապաշտպանական ուժերի և նրանց ղեկավարների հերոսությունը,խիզախությունը և անձնազոհությունը թուրքական մեծաքանակ և գիշատիչ ուժերի դեմ մղվող պայքարում

Գնահատել ինքնապաշտպանական մարտերի դերը թուրքական կոտորածների դիմակայության գործում

Զարգացման-դասանյութի բովանդակության միջոցով զարգացնել աներեր կամք,համառություն,տոկունություն,մտավոր ակտիվություն և հնարամտություն

3.Ուսուցման միջոցները

4.Ուսուցման մեթոդները-ինքնուրույն աշխատանքի,որոնողական և հետազոտական

5.Դասի տիպը,պրոբլեմային ուսուցման դաս

6.դասի ընթացքը

Պրոբլեմային հարցի առաջադրում,պրոբլեմային իրավիճակի ստեղծում,պրոբլեմի լուծում:Քանի որ սովորողները համաշխարհային պատմության դասընթացից արդեն ուսումնասիրել են հայ ժողովրդի պատմության հետ կապված Ռուսաստանի և Թուրքիայի 20-րդ դարի սոցիալ տնտեսական և քաղաքական իրադարձությունները ,ուստի անհրաժեշտ է ամբողջացնել և համակարգել սովորողների գիտելիքները նշված թեմաներից:Այդ հանգամաքը նկատի ունենալով դեռևս մի քանի դասաժամ առաջ սովորողներին առաջարկվել էր կազմել Ռուսաստանի և Թուրքիայի պետական և հասարակական քաղաքական կյանքին վերաբերող առանձին աղյուսակներ:

1.Ելնելով վերը նշվածից՝այս դասը կարելի է սկսել նախորդ թեմաներից առաջադրված տնային աշխատանքի քննարկումով:Աշակերտներին որպես տնային աշխատանք այս անգամ արդեն հանձնարարվել էր,օգտագործելով օժանդակ նյութեր,լրացնել հետևյալ համեմատական աղյուսակը.

Հարցեր համեմատության համար	Ռուսաստան	Թուրքիա
1.Ինչպիսին է տնտեսական կյանքը		
2.Ինչպիսին է պետության քաղաքական կյանքը		
3.Ինչպիսին են սոցիալական կառուցվածքը և ազգային կազմը		
4.Կանխատեսում		

Սովորողների հետ քննարկելով տանը նրանց լրացրած աղյուսակը՝ուսուցիչը համոզվում է,որ նրանք ճիշտ են ըմբռնել Թուրքիայի և Ռուսաստանի սոցիալ տնտեսական կյանքի,քաղաքական կառուցվածքի ընդհանուր և առանձնահատուկ գծերը,որոշ կանխատեսումներ անել Թուրքիայում սպասվող իրադարձությունների վերաբերյալ:Ընդհանրացնելով աղյուսակում առկա դեպքերն ու

երևույթները ,ուսուցիչը նշում է համիդյան բռնակալության դեմ Թուրքիայում հասունացող լուրջ դժվարությունների մասին:

2.Անցում նոր դասանյութին

ա.նոր նյութի հայտնումը սովորողներին

Հակահամիդյան շարժումը;հայկական հարցը 1912-14թթ

Հիմնական հարրցեր

Երիտթուրքական հեղաշրջումը

Կիլիկիահայության կոտորածները և ինքնապաշտպանական կռիվները

Հայկական հարցը 1912-14թթ

Բ.Մոտիվացիա-թեմայի կիրառելիության կարևորության ընդգծումը

Ոսուցիչը նշում է,որ յուրացնելով երիտթուրքական հեղաշրջման մասին գիտելիքները՝իրենք կարող են

1.խորությամբ ըմբռնել,վերլուծել և գնահատել այն մեծ ողբերգությունը,որն իրականացվեց երիտթուրքերի կողմից 1915թ.հայ ժողովրդի նկատմամբ

2.նպաստել հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար մղվող պայքարին

3.ճիշտ կողմնորոշվել այն իրադրության մեջ,որ այսօր կատարվում է Թուրքիայում,ճիշտ եզրակացություն անել դրանց վերաբերյալ

Գ.Անցում նոր նյութին,այսինքն կապերի ստեղծում աշակերտների արդեն ունեցած և նոր ձեռք բերված գիտելիքների միջև

Անցումը նոր նյութին կարելի է կատարել հետևյալ ասույթների օգտագործման միջոցով.

1.Ռուս հեղափոխական Լենինը գրել է.<<Թուրքական Նիկոլայ 2-րդը գլուխն ազատել է առայժմ թուրքական հռչակավոր Սահմանադրությունը վերականգնելու խոստումով.Ում նկատի ունի Լենինը,ինչ նմանություն էր տեսնում ռուս և թուրք Նիկոլայների միջև:

2.Հնչակյան գործիչ Սապահ Գյուլյանը գրել է.<<Փարիզը դարձել է ուխտատեղի,մի տեսակ թուրք Արշակավան>>.Ինչ իմատով է հեղինակը համեմատել Փարիզը և Արշակավանը,ինչ երևույթի մասին է խոսքը;

3.Պատասխանելով Գերմանիայում ուսանող Հովսեփ Աթաբեկյանի նամակին՝Էնգելսը գրել է.<<Խոսքը վերաբերում է մի ճնշված ժողովրդի,որը դժբախտություն ունի գտնվելու թուրքական բռնապետության Սցիլլայի և ռուսական բռնակալության խարիբդայի արանքում>>:Ինչ նկատի ունի Էնգելսը նման համեմատություն անելիս:Որքան է այդ համեմատությունն արտահայտում իրերի իրական վիճակը:

Դ.Մտագրոհ կամ խմբավորում

Նախորդ թեմաներից ու անձնանական փորձից նոր նյութի ուսումնասիրման վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները պարզելու և արդիականացնելու համար կարելի է կազմակերպել մտագրոհ,խմբավորում կամ պրիզմա վարժությունները:

<<Ինչ եք հասկանում հեղաշրջում>>ասելով

Հեղաշրջում

7.Ուսումնական նյութից պրոբլեմի առանձնացումը և պրոբլեմի ձևակերպումը

Մտագրոհի արդյունքները ամփոփելուց հետո սովորողներին առաջարկվում է կարդալ դասագրքի հետևյալ հատվածները և գտնել հակասություն մեր ունեցած գիտելիքի և անհայտ գիտելիքների միջև:Դասագրքի նյութի առաջին ենթավերնագիրը ընթերցելուց հետո սովորողները հայտնաբերում են հակասություններ տեքստի հետևյալ հատվածներում.

<<1908թ.հուլիսին Թուրքիայում տեղի է ունենում պետական հեղաշրջում:Երկրում հաստատվում են սահմանադրական կարգեր,որտեղ վճռական դեր են խաղում երիտթուրքերը:Համիդյան բռնակալության տապալումը մոծ խանդավառություն առաջացրեց կայսրության բոլոր ժողովուրդների այդ թվում նաև հայերի մեջ>>:

Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը գաղտնի նախապատրաստություններ է տեսնում վերականգնելու սուլթանական բացարձակ միապետությունը>>:

Հակասությունը տեքստի երկու հատվածների միջև ակնհայտ է:Տեքստի առաջին հատվածից կարելի է եզրակացնել,որ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը պետք է գահընկեց արված լիներ:Բայց իրականում նա մնացել էր գահին և 1909թ.մարտի 31-ին խռովություն բարձրացրել:Եթե սովորողները չեն տեսնում հակասություն,ուսուցիչն ուղղորդում է նրանց և հուշում տեսնելու և գտնելու գիտելիքների պակասը:

8.Սա համարվում է պրոբլեմային ուսուցման առաջին փուլը:Այդ նպատակով ուսուցիչը մշակում և սովորողներին է ներկայացնում հարցերի մի ամբողջ խումբ,բորում օրինակներ:Ձեր կարծիքով

ինչով է տարբերվում պետական հեղաշրջումը իշխնափոխությունից:Նախորդ դասընթացներում դուք հանդիպել եք նման իրավիճակների:կարող եք բերել օրինակներ:Եթե սովորողները դժվարանում են,ուսուցիչը հիշեցնում է Կիլիկիայում 1226թ.կատարված դեպքերը,որոնց արդյունքում իշխանությունը Ռուբինյաններից անցնում է հեթումյաններին:Որպես օրինակ ուսուցիչը կարող է նշել նաև 2018թ.ապրիլյան իրադարձությունները Հայաստանում:

Ուսուցիչը ոչ միայն հիշեցնում և մեկնաբանում է նշված իրադարձությունները,այլև դրանց շնորհիվ հետաքրքրություն է առաջացնում պրոբլեմի նկատմամբ:Առաջ է գալիս հեղաշրջման մասին սովորողների գիտելիքների վերականգնման և վերանայման,վերակառուցման անհրաժոշտություն:

Քանի որ դասագրքի տեքստում առկա է անհայտ գիտելիքով պայմանավորված այլ հիմնախնդիր,ուստի կարելի է ձևակերպել մեկ այլ պրոբլեմ՝որպես նյութի ուսուցման 2-րդ տարբերակ:Այսպես,8-րդ դասարանի 116 էջում գրված է.<<Ամրապնդելով իրենց իշխանությունը՝երիտթուրքերը ծրագրում և իրագործում են Կիլիկիայի հայության կոտորածը>>:Սրանից առաջ,115 էջում գրված է.<<1909թ մարտի 31-ին նա հեղաշրջում կազմակերպեց:Սակայն կառավարությանը հավատարիմ զորքերը վերականգնում են երիտթուրքերի իշխանութունը:Սուլթանը գահընկեց է լինում>>:

Սովորողները,ծանոթանալով տեքստի այս հատվածներին՝ուսուցչի օգնությամբ նրանում պրոբլեմ են տեսնում:Հակասություն է նկատվում նրանց ունեցած գիտելիքների և նոր մատուցվող գիտելիքների միջև:Հակասությունը նրանում է,որ Կիլիկիայում հայերի կոտորածն սկսվել է 1909թ.ապրիլի 1-ին այսինքն այն օրը,երբ սուլթան Աբդուլ համիդը վերականգնեց իր անսահմանափակ իշխանությունը:

Հարց է առաջանում,եթե ապրիլի 1-ին երիտթուրքերը կորցրին իրենց իշխանությունը, ինչպես կազմակերպեցին Կիլիկիայի հայության կոտորածը:Կամ երբ երկրում սկսվում են ռազմական բախումները ինչպես կարող է ամրապնդված լինել երիտթուրքերի իշխանությունը,մանավանդ,որ երիտթուրքական կուսակցության անդամների մեծ մասը այդ օրերին ճողոպրում է Սալոնիկ:

9.Պրոբլեմային հարցի ձևակերպումը

Արդյոք 1908թ.հուլիսը կարելի է համեմատել պետական հեղշրջման ավարտ,այն դեպքում,երբ սուլթան Աբդուլ համիդը գահընկեց է արվել 1909թ.ապրիլի վերջերին:

10.Պրոբլեմային իրավիճակի ստեղծում,դժվար կացություն

Սովորողներն ապրում են հոգեկան վիճակ:Նրանք սկսում են մտածել և աշխատել պրոբլեմի լուծման ուղղությամբ:

11.Սովորողների ինքնուրույն աշխատանքը

Ձևավորվում է հետաքրքրություն պրոբլեմի նկատմամբ:Նրանց մեջ աստիճանաբար ի հայտ է գալիս մտավոր,ներքին դիրքորոշում ու ձգտում:Սովորողներն սկսում են պրոբլեմային իրավիճակից դուրս գալու աշխատանքները,կազմում գործունեության մոտավոր պլան և անցնում որոնողական գործողությունների:Նրանք նախ ի մի են բերում իրենց նախկին գիտելիքները պրոբլեմի մասին,պարզում դրանց հակասությունը և կապը անհայտ գիտելիքի հետ,ճշտում պակասող գիտելիքի հնարավոր սահմանները:

12.Պրոբլեմի որոնման և հետազոտական աշխատանքի փուլը

Սովորողներն սկսում են պակասող գիտելիքների որոնումը:Նրանք ընտրում են պրոբլեմի լուծման համար գիտելիքների նոր աղբյուրներ,կարդում դրանք,ի հայտ բերու նոր փաստեր,դրանք կապում իրենց ունեցած փաստերի հետ,կատարում վերլուծություն,համադրություն,գտնում գործողության նոր եղանակներ:Ճանաչողական գործընթացը զարգանում է աստիճանաբար,փուլերով,որոնցում գործադրվում են մասնավոր որոնողական,հետազոտական մեթոդներ:Այդ ընթացքում կուտակված գիտելիքները վերածվում են գործողությունների,վերացարկվում են երևույթները,գործի են դրվում միջառարկայական կապերը:Այս փուլում որոնոները հենվում են նախորդ փուլերում ձեռք բերված գիտելիքների վրա,որոնց միջև կապերի հետազոտման,բացահայտման ու ընդլայնման միջոցով ի հայտ են գալիս ենթապրոբլեմներ,դրանց լուծման նոր ուղիներ ու միջոցներ:Հետազոտական աշխատանքի ընթացքում սովորողներն առաջ են քաշում տարբեր վարկածներ,որոնցում լրացուցիչ փաստարկներ ու հիմնավորումներ,ստուգում դրանց գիտականությունը,բացահայտում անհայտի հայտնաբերման ուղիները,կատարում ընտրություն:

13.Պրոբլեմի լուծումը

Այս փուլում արդյունքը անհայտի հայտնագործումն է,որի միջոցով գտնում են մյուս անհայտները:Առաջադրված պրոբլեմը սովորողները լուծեցին հետևյալ կերպ.երիտթուրքական հեղաշրջումը Թուրքիայում ընթացել է երկու փուլով՝այն սկսվել է 1908թ.հուլիսին և ավարտվել 1909թ.ապրիլին Աբդուլ Համիդի գահընկեցությամբ:

Դասընթացի 2-րդ և 3-րդ <<Ինքնապաշտպանական կռիվները Կիլիկիայում>>և<<Հայկական հարցը 1912-14թթ>>հարցերը ուսումնասիրվում են սովորողների ինքնուրույն անհատական աշխատանքի կազմակերպմամբ,որի արդյունքում կազմվում են համեմատական և ժամանակագրական աղյուսակներ:

Աղյուսակ 1.<<Ինաքնապաշտպանական կռիվները Կիլիկիայում 1909թ.ապրիլին>>

Ինքնապաշտ. թիվը	Վայրը	Ուժերի թիվը	Գործիչները	Արդյունքները

Աղյուսակ 2.<<Հայկական հարցը 1912-14թթ>>

Տարեթիվ	Իրադարձություն

14.Տնային առաջադրանքներ

1.Տեքստից դուրս գրեք հայ-ռուսական համաձայնագրի երկու կետ,որոնք ձեր կարծիքով կարելի է վերաձևակերպել այլ կերպ:Ներկայացրեք ձեր վերաձևակերպումները:

2.Ա.Մանդելշտամի կազմած հայկական բարենորոգումների նախագիծն արտահայտեք աղյուսակի տեսքով և լրացրեք այն:

3.Գրեք համառոտ շարադրություն <<1909թ.ապրիլի 1-ը Ադանայում>>վերնագրով:

Եզրակացություն

Պրոբլեմային ուսուցումն աշակերտներին օգնում է դառնալ անկախ և ինքնուրույն սովորողներ,զարգացնում է տրամաբանական, քննադատական մտածողություն,ուսումնական նյութը դառնում է ապացուցելի և այլևս ոչ մի կասկած չի հարուցում:Ուսուցման գործընթացը դառնում է հուզական,ընձեռում է միջառարկայական կապերից օգտվելու հնարավորություն,ձեռք բերված գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են:Ակտիվանում է ուսուցումը,արագանում է տեմպը,ինչպես նաև մեծանում է աշակերտների ինքանգործունեության շրջանակը,լայնանում է սովորողների որոնողական հետազոտական աշխատանքներ կատարե;ու ոլորտը:

Երբ աշակերտին առաջադրվում է պրոբլեմային խնդիր,նա առաջին հերթին մտածում է գտնել գործողության նոր եղանակներ,կենտրոնացնում-համախմբում է իր գիտելիքներն ու կարողությունները,դատում է,տրամաբանում,առաջադրում վարկածներ և այլն:Պրոբլեմային ուսուցումը ներառում է բազմազան զարգացնող գործառույթներ,այսպես օրինակ,համակարգում է աշակերտների մտածողությունը,բարձրացնում նրանց սովորելու նպատակայնությունը,աճում է ուսման նկատմամբ հետաքրքրասիրությունը:Կազմակերպվում են սովորողների խմբային մտավոր աշխատանքներ,ապահովվում է նրանց մտածողության դիալեկտիկական զարգացումը,տեղի է ունենում գիտելիքների փոխանցում՝նոր իրավիճակներում:

Այսպիսով,պրոբլեմային մեթոդով աշխատանքը սովորողներին հնարավորություն է տալիս ինքնուրույն յուրացնել պատմական նյութերը,սկզբնաղբյուրները,կանխատեսել նպատակին

հասնելու խնդիրները,նպաստում է օգտվել տեղեկատվական աղբյուրներից,և վերջապես հասկանալ <<Ինչպես սովորել>>հարցի պատասխանը:Հասկանալի է,որ աշակերտների ուսուցման որակական աճի,և ընդհանրապես,կրթական առաջընթացի համար ոչ մի այլ ռազմավարություն այնքան արդյունավետ չէ,որքան պրոբլեմային մեթոդով աշխատանքը:Առարկայական նյութի յուրացումը այս դեպքում դառնում է անհատական և իմաստալից:Նմանատիպ աշխատանքներ կատարելիս ուսուցիչն աշակերտին հնարավորություն է տալիս դրսևորել ինքնուրույնություն,ինքնակառավարում,համագործակցություն և իրազեկվածություն:

Օգտագործված գրականություն

1. Ջ. Դյուի << Ինչպես ենք մենք մտածում>:
2. Կ. Սելևկո <<Ուսուցման տեխնոլոգիաների հանրագիտարան>>
3. Մ. Դավթյան << Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումները>:
4. Յու. Ամրիջանյան << Մանկավարժություն>>